

## Անկախ ատոլիտորական եզրակացություն

### Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ի մասնակիցներին

Մենք ատոլիտի ենք ենթարկել Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

### *Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվություն*

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

### *Ատոլիտորի պատասխանատվություն*

Մեր պարտականությունն է անցկացված ատոլիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք ատոլիտն անցկացրեցինք Ատոլիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, ատոլիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում՝ ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Ատոլիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ ատոլիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում:

Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խնդրաբյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մեր համոզմամբ՝ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

*Հիմքեր դրական վերապահումով կարծիք արտահայտելու համար*

Ընկերությունը 2011թ. իրականացրել է պաշարների գույքագրում: Մեր կողմից իրականացվել է պաշարների մասնակի գույքագրում: Սակայն, ելնելով պաշարների բնույթից և մեծ քանակից, մենք ի վիճակի չենք եղել այլ աուդիտորական ընթացակարգերի կիրառման միջոցով ինքներս համոզվել դրանց առկայության մեջ և ձեռք բերել բավականաչափ և համապատասխան ապացույցներ դրանց քանակի վերաբերյալ:

*Վերապահումով դրական կարծիք*

Մեր կարծիքով, բացառությամբ այն հնարավոր ուղղումների ազդեցությունից, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե մենք կարողանայինք ինքներս համոզվել վերը նշյալ պարագրաֆում ներկայացված տվյալների ճշտության հարցում, ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաբովի՛ն ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

06 ապրիլ, 2012թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր

Անդրեաս Հովհաննիսյան

Աուդիտոր-բաժնետեր





Անկախ ատոլիտորական եզրակացություն

Երևանի «Շամպայն գինիների գործարան»

Բաց Բաժնետիրական Ընկերություն

31 դեկտեմբերի 2011թ.

Բովանդակություն

[Անկախ ատոլիտորական եզրակացություն](#)

Էջ

2

[Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն](#)

4

<a href="#"><u>Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն</u></a>	5
<a href="#"><u>Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն</u></a>	6
<a href="#"><u>Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն</u></a>	7
<a href="#"><u>Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ</u></a>	8



Պոռշյան 2/1, Երևան 0019, Հայաստանի Հանրապետություն  
իրավ. հասցե՝ Գր. Արծրունու 78/3 շ, բն. 47  
2/1 Proshyan str., Yerevan 0019, Republic of Armenia  
Legal address: 47 apt. Gr. Artsruni str., 78/3

**«ՖԻՆՏԵԽ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ**

Լիցենզիա/License N ԱԾ/ATS 072

Հեռ/Tel: (374 10) 229 238

Ֆաքս/Fax: (374 10) 229 278

[www.fintechaudit.am](http://www.fintechaudit.am)

[info@fintechaudit.am](mailto:info@fintechaudit.am)

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Տարեկան հաշվետվություն

ԵՐԱՆԻ «ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 20, հեռ. 28 – 54 – 76, ֆաքս 28 – 54 – 68

էլ. փոստ info@armchampagne.am

N 07 27.04.2012թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ հասարակ, անվանական

արժեթղթերի քանակը՝ 222183 հատ

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 4000 ՀՀ դրամ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

<u>Հ. Իսկաջյան</u> (անուն, ազգանուն)	<u>Գլխավոր հաշվապահ</u> (պաշտոն)	_____	<u>27.04.2012թ.</u> (ամսաթիվ)
<u>Գ. Մինասյան</u> (անուն, ազգանուն)	<u>Փոխտնօրեն</u> (պաշտոն)	_____	<u>27.04.2012թ.</u> (ամսաթիվ)
<u>Ս. Հակոբյան</u> (անուն, ազգանուն)	<u>Իրավախորհրդատու</u> (պաշտոն)	_____	<u>27.04.2012թ.</u> (ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի, կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

<u>Ֆ. Հակոբյան</u> (անուն, ազգանուն)	<u>Գործադիր տնօրեն</u> (պաշտոն)	_____	<u>27.04.2012թ.</u> (ամսաթիվ)
---	------------------------------------	-------	----------------------------------

Կ.Տ.

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծա նոթ .	2010թ. դե կտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դե կտեմբերի 31-ի դրությամբ (վերաներ կայացված)	2009թ. դե կտեմբերի 31-ի դրությամբ (վերաներ կայացված)
<b>Ակտիվներ</b>				
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>				
Հիմնական միջոցներ	4	2,444,136	2,355,965	2,363,119
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	5	50	43,777	51,325
Շահութահարկի կանխավճար 1% չետաձգված հարկային ակտիվներ	6	-	5,728	-
		5,700	5,560	4,520
		<u>2,449,886</u>	<u>2,411,030</u>	<u>2,418,964</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>				
Պաշարներ	7	1,106,659	1,202,171	1,103,866
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	563,265	224,131	514,638
Մնացորդներ դրամարկղում և բանկե րում	9	16,995	23,326	100,813
		<u>1,686,919</u>	<u>1,449,628</u>	<u>1,719,317</u>
Ընդամենը ակտիվներ		<u>4,136,805</u>	<u>3,860,658</u>	<u>4,138,281</u>
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>				
<i>Կապիտալ և պահուստներ</i>				
Կանոնադրական կապիտալ	10	888,732	888,732	888,732
Պահուստային կապիտալ	10	390,587	390,587	390,587
Կուտակված շահույթ		215,615	104,870	90,792
		<u>1,494,934</u>	<u>1,384,189</u>	<u>1,370,111</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>				
Բանկային վարկեր	12	201,323	-	-
Ակտիվներին վերաբերվող շնորհներ	11	1,872,293	1,976,310	2,080,326
		<u>2,073,616</u>	<u>1,976,310</u>	<u>2,080,326</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>				
Բանկային վարկեր փոխառություններ	12	350,157	314,344	571,730
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	215,652	180,323	100,054
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		2,446	5,492	16,060
		<u>568,255</u>	<u>500,159</u>	<u>687,844</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>4,136,805</u>	<u>3,860,658</u>	<u>4,138,281</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2012թ. ապրիլի 6-ին՝

Գործադիր տնօրեն  
Ֆիամետա Հակոբյան

Գլխավոր հաշվապահ  
Հովհաննես Իսկաչյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ		2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վե րանե րկայացված)
	Ծանոթ.		
Հասույթ	14	1,549,817	1,460,834
Վաճառքի ինքնարժեք	15	(1,174,555)	(1,072,236)
Համախառն շահույթ		375,262	388,598
Այլ եկամուտներ		134,219	127,995
Իրացման ծախսեր		(173,661)	(166,196)
Վարչական ծախսեր		(112,623)	(137,274)
Այլ ծախսեր		(61,804)	(129,794)
Գործառնական գործունեությունից շահույթ		161,393	83,329
Ֆինանսական ծախսեր	16	(16,211)	(18,552)
Այլ ֆինանսական հոդվածներ	17	(14,080)	(13,659)
Շահույթ մինչև հարկերը		131,102	51,118
Շահութահարկի գծով ծախս	18	(20,357)	(19,040)
Տարվա շահույթ		110,745	32,078
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		110,745	32,078
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ դրամ	19	498	144



Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Վճարված կանոնադր ական կապիտալ	Պահուս- տային կապիտալ	Կուտակ- ված շահույթ	Ընդամենը
2010թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկայացված)	888,732	390,587	90,792	1,370,111
Տարվա շահույթ Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	32,078	32,078
Շահաբաժին 2010թ. դեկտեմբերի 31 դրությամբ (վերանե րկայացված)	-	-	32,078	32,078
			(18,000)	(18,000)
2010թ. դեկտեմբերի 31 դրությամբ (վերանե րկայացված)	888,732	390,587	104,870	1,384,189
Տարվա շահույթ Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	110,745	110,745
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	110,745	110,745
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	888,732	390,587	215,615	1,494,934

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Հազար դրամ

	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Տարվա շահույթ	110,745	32,078
<i>Ճշգրտումներ`</i>		
Մաշվածություն	56,988	45,393
Շահութահարկի գծով ծախս	20,357	19,040
Ֆինանսական ծախս	16,211	18,552
Դեբիտորական պարտքի պահուստի ծախս	-	61,888
Ներդրումների արժեզրկում	43,727	7,548
Շնորհներից եկամուտ	(104,017)	(104,016)
Փոխարժեքային տարբերությունից վնաս	14,080	13,659
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	158,091	94,142
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(349,408)	219,562
Պաշարների փոփոխություն	95,512	(98,305)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	35,329	80,269
<i>Գործառնական գործունեությունից ստացված/ օգտագործված դրամական միջոցներ</i>	(60,476)	295,668
Վճարված տոկոս	(16,211)	(18,552)
Վճարված շահութահարկ	(17,815)	(36,376)
<i>Գործառնական գործունեությունից ստացված/ օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	(94,502)	240,740
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(145,159)	(38,239)
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	(145,159)	(38,239)
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Վարկեր և փոխառություններ, զուտ	237,136	(257,386)
Վճարված շահաբաժին		(18,000)
<i>Ֆինանսական գործունեության համար ստացված/ օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	237,136	(275,386)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(2,525)	(72,885)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	(3,806)	(4,602)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	23,326	100,813
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	16,995	23,326

# Գրամական միջոցների հոսքերի մասին հաշվե տվություն

Գրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվե տվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունն րի հետ մեկտեղ:

## Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

- **Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն**

Երևանի «Շամպայն Գինիների Գործարան» բաց բաժնետիրական ընկերությունը, որը ցուցակագրված է «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ-ում, գրանցվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պե տական ռեգիստրում 1995թ. սեպտեմբերի 1-ին և հանդիսանում է Երևանի «Շամպայն Գինիների Գործարան» ձեռնարկության իրավահաջորդը:

Ընկերությունը հիմնականում զբաղվում է գործունեության հետևյալ տեսակներով.

- ոգելից խմիչքների արտադրություն,
- ոգելից խմիչքների, գինիների և լիկյորների մեծածախ առք ու վաճառք,
- խաղողի մթերում և վերամշակում,
- տակառագործություն, փայտե տակառների վերանորոգում,
- սպիրտի արտադրություն և այլն:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Թբիլիսյան 20:

2011թ. Ընկերության աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 233 մարդ (2010թ.՝ 215 մարդ):

- **Պատրաստման հիմքերը**

- **Համապատասխանություն**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունն րի միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Մինչև այժմ ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում էին համաձայն Հայաստանի հանրապետության հաշվապահական ստանդարտների (ՀՀՀՀՍ): Ընկե րությունն առաջին անգամ է ներկայացնում իր ֆինանսական հաշվետվությունները համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների: ՀՀՀՀՍ-ի և

ՖՀՄՍ-ի միջև առկա տարբերություններն էականորեն չեն վերաբերվում ընկերության ֆինանսական հաշվետվություններին: Այդ պատճառով ՖՀՄՍ-ի անցման արդյունքում էական ճշգրտումներ չեն կատարվել ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

- **Ճանաչման հիմքեր**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ ֆինանսական գործիքների:

- **Գործառնական և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ դեկլարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

- **Գնահատումների և դատողությունների կիրառում**

ՖՀՄՍ-ի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ե նթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 22-ում:

- **ՖՀՄՍ 9. Ֆինանսական գործիքներ**

ՀՀՄՍԽ նպատակ ունի 2010թ. վերջին ամբողջությամբ փոխարինել ՀՀՄՍ 39. Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և Չափում: Փոխարինող ստանդարտը ուժի մեջ կմտնի 2015թ. հունվարի 1-ին սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ 9 այս ծրագրի Փուլ 1-ի առաջին մաս: Հիմնական փուլերը հետևյալն են՝ Դասակարգում և չափում, Արժեզրկման մեթոդոլոգիա, Հեջավորման հաշվառում:

Ապաճանաչման հաշվառման համար նախատեսված է առանձին ծրագիր:

Ղեկավարությունը դեռևս չի գնահատել նշված փոփոխության կիրառման հնարավոր ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա:

- **Նախորդ տարիների էական սխալների ուղղում**

Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդող ժամանակաշրջանների համեմատելի տեղեկատվությունը, ներկայացվում են այնպես, իբր էական սխալներն ուղղվել են այն ժամանակաշրջանում, որում դրանք կատարվել են: Հետևաբար, ներկայացված յուրաքանչյուր ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը ներառվում է այդ հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթի մեջ: Ներկայացված ժամանակաշրջաններից ամենավաղ ժամանակաշրջանի կուտակված շահույթի սկզբնական մնացորդը կարգավորվում է ճշգրտումների այն գումարով, որը վերաբերում է այն ժամանակաշրջաններին, որոնք նախորդում են վերջին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների համեմատելի տեղեկատվության մեջ ներգրավված ժամանակաշրջաններին: Նախորդող ժամանակաշրջանների վերաբերյալ ներկայացված որևէ այլ տեղեկատվություն, ինչպիսին է նախորդ տարիների ֆինանսական տվյալների ամփոփագիրը, նույնպես վերաներկայացվում է (տես ծանոթագրություն 24):

- **Հաշվապահական հաշվառման քաղաքականություն**
- **Արտարժույթ**

*Արտարժույթով գործարքներ*

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից հրապարակված՝ արտարժույթային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 385.77 ՀՀ դրամ, (2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 363.44 ՀՀ դրամ): Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում: Իրական արժեքով արտահայտված ոչ

դրամային հողվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն ոչ դրամային հողվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հողվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

- **Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարներ, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության կամ վարչական կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն ընկերության որդեգրած քաղաքականության: Այս ակտիվների մաշվածությունը և հաշվարկվում է, երբ դրանք դառնում են պատրաստ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են դուրսգրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ

ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր, շինություններ	- 20 տարի
Համակարգչային տեխնիկա	- 1 տարի
Մեքենաներ, սարքավորումներ	- 5 տարի
Արտադրական, տնտեսական գույք	- 5 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 10 տարի:

- **Վարձակալված ակտիվներ**

Համաձայն ՀՀՄՍ 17. «Վարձակալություն»՝ վարձակալությունը պայմանավորվածություն է, որով վարձատուրն վճարի կամ վճարների շարքի դիմաց համաձայնեցված ժամկետով վարձակալին է փոխանցում ակտիվի օգտագործման իրավունքը: Եթե վարձակալին չեն փոխանցվում սեփականության իրավունքի հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները, ապա վարձակալությունը դասակարգվում է որպես գործառնական:

Գործառնական վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության, ծախսագրվում են իրականացման պահին:

- **Պաշարներ**

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գ ինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով միջին կշռված մեթոդը և նե րառում է պաշարների ձեռք բերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գ տնվելու վայր հասցնելու ծախսերը:

- **Ֆինանսական գործիքներ**

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են,



վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

### *Ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասերը պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, թե ուղղակիորեն սեփական կապիտալում: Ընկերության ֆինանսական ակտիվներն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 20.2-ում:

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեքի մասին գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «ֆինանսական ծախս» և «ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

- Առևտրային դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի գգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

- Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդներ դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցներ, բանկային հաշիվների մնացորդներ և դրամական միջոցներ ճանապարհին, որոնք ներկայացված են ֆինանսական ակտիվների «վարկեր և դեբիտորական պարտքեր» կատեգորիայում:

- Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ
  - Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ արժեքի փոփոխությունները ուղակիորեն ճանաչելով սեփական կապիտալում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ, երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և ֆինանսական համապարփակ արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե համապատասխան աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվե

տվությունում արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

*Ֆինանսական պարտավորություններ*

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը՝ ներառյալ ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ընկերության ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 20.2-ում:

- Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

- Արժեզրկում

*Հիմնական միջոցների արժեզրկում*

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա

հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես չճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

#### *Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման

հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլինելը:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի արժեթղթերին, արժեզրկումից հետո իրական արժեքի աճն ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

- **Պետական շնորհներ**

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստացված հողին վերաբերող շնորհները, սխտեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքներ մասին հաշվետվություն՝ այդ հողերի վրա տեղակայված շինությունների օգտակար ծառայության ժամկետներին համամասնորեն:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է Ընկերությանն՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

- **Սեփական կապիտալ**

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

- **Պահուստներ**

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վե

րաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

- **Շահութահարկ**

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվե տու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուղվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

- **Հասույթի ճանաչում**

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

*Ապրանքների վաճառք*

Հասույթը հիմնականում ստացվում է այնպիսի ոգելից խմիչքների վաճառքից, ինչպիսիք են շամպայնը, օղին, գինին, կոնյակը և այլն, և ճանաչվում է, երբ ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և փոփոխությունների մեծ մասը գնորդին է փոխանցվել, չկան էական անորոշություններ կապված վերլուծությունների, կապակցված ծախսերի ու ապրանքների հնարավոր վերադարձների հետ և հասույթի գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

*Վարձակալական եկամուտ*

Ներդրումային գույքից վարձակալական եկամուտը ճանաչվում է հաշվեգրման

սկզբունքով՝ համաձայն պայմանագրի:

- **Հիմնական միջոցներ**

Հազար դրամ

	<u>Հողա մասեր</u>	<u>Շենքեր և շինություն ներ կառուցված քներ</u>	<u>Մեքենա- սարքավորումներ տրանսպորտային միջոցներ, արտադրական և տնտեսական գ ույք</u>	<u>անավարտ ոչ ընթացիկ ակտիվներ</u>	<u>Ընդամենը</u>
<i>Սկզբնական արժեք</i>					

2010թ. հունվարի 1-ի դրությամբ	2,084,647	300,088	404,420	23,132	2,812,287
Ավելացում	-	12,888	24,792	559	38,239
Օտարում	-	-	(56)	-	(56)
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,084,647	312,976	429,156	23,691	2,850,470
Ավելացում	-	12,396	132,763		145,159
Ներքին շարժ		4,584	2,862	(7,446)	-
Օտարում	-	-	(3,410)	-	(3,410)
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,084,647	329,956	561,371	16,245	2,992,219
<i>Կուտակված մաշվածություն</i>					
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	-	159,252	289,916	-	449,168
Տարվա ծախս	-	14,673	30,720	-	45,393
Օտարման հետևանքով դուրս գրված	-	-	(56)	-	(56)
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	173,925	320,580	-	494,505
Տարվա ծախս	-	15,545	41,443	-	56,988
Օտարման հետևանքով դուրս գրված	-	-	(3,410)	-	(3,410)
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	189,470	358,613	-	548,083
<i>Հաշվեկշռային արժեք</i>					
2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,084,647	140,836	114,504	23,132	2,363,119
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,084,647	139,051	108,576	23,691	2,355,965
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,084,647	140,486	202,758	16,245	2,444,136

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հիմնական միջոցներից՝ 12,012 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով, գրավադրված են «Յունիբանկ» Փակ Բաժնետիրական Ընկերությունում (2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,410 հազ. դրամ) :

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 197,822 հազ. դրամ (2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 179,033 հազ. դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են գրոյական հաշվեկշռային արժեքով:

Մաշվածության գծով ծախսը՝ 56,988 հազ. դրամից (2010թ.՝ 46,393 հազ. դրամ), 56,959 հազ. դրամը բաշխվել է ինքնարժեքին, իսկ 29 հազ. դրամը՝ վարչական ծախսերին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի փոփոխության, 2005թ Ընկերությանը սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել են ք.Երևան



Թբիլիսյան խճ. 20 հասցեում գտնվող 117,170.6 ք.մ և Կոտայքի մարզ, գ.Քանաքեռական հասցեում գտնվող 17,000 ք.մ հողամասերը, պայմանով՝ գույքի հետագա օտարման գ ործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման մասին գ ործող հողի կադաստրային արժեքի անդորրագիրը ներկայացնելու դեպքում:

Ընկերությունը չէր կատարել հողամասերի շուկայական արժեքի գնահատում և չէր տվել համապատասխան հաշվապահական ձևակերպումներ ֆինանսական հաշվետվություններում:

2012թ. ապրիլին իրականացվել է հողամասերի շուկայական արժեքի գնահատում՝ անկախ գնահատող «ԷՅ ԷՆԴ ԷՄ ՖԱՅՆԵՆՇԼ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՓԲԸ գնահատման գ ործակալության կողմից 2010թ. հունվարի 1-ի դրությամբ: Շուկայական արժեքը որոշվել է համեմատական մեթոդով և կազմել է Ք.Երևան Թբիլիսյան խճ. 20 հասցեում գտնվող հողամասը 2,220,382 հազ.դրամ, իսկ Կոտայքի մարզ, գ.Քանաքեռական հասցեում գտնվող հողամասը 41,110 հազ.դրամ, ընդամենը 2,261,493 հազ.դրամ:

Վերը նշվածը որակավորվել է Ընկերության կողմից որպես նախորդ տարիների էական սխալների ուղղում, որի արդյունքում 2,080,326 հազար դրամով ճշգրտվել է 2010թ. հունվարի 1-ի դրությամբ հիմնական միջոցների սկզբնական արժեքը, ինչպես նաև ակտիվներին վերաբերող շնորհը:

## 5 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում

Հազար դրամ	2011	2010
Տարեսկզբի մնացորդ	43,777	51,325
Վնասի բաժին	(43,727)	(7,548)
Տարեվերջի մնացորդ	50	43,777

Ասոցիացված կազմակերպության արդյունքներում և ակտիվներում ընկերության բաժնե մասը ներկայացված է ստորև.

Անվանում	Հիմնական գործունեություն	Գրանցման երկիր	Բաժնեմասի չափ (%)	
			2011	2010
«Արմա-Ֆրանս » ՍՊԸ	Ալկոհոլային խմիչքների առք ու վաճառք և պահպանում	Ռուսաստանի Դաշնություն	40.00	40.00

Ընկերության ասոցիացված կազմակերպության մասին ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդամենը ակտիվներ	1,183,157	986,841
Ընդամենը պարտավորություններ	(1,190,728)	(877,511)
Զուտ ակտիվներ	(7,571)	109,330
Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդամենը վնաս	(115,883)	(8,470)

**«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ**

«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ-ում կատարված ներդրումները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ նշված գործիքի համար արդյունավետ շուկայի բացակայության պատճառով:

**• Հետաձգված հարկեր**

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2011թ.	2010թ.	2009թ.
Տարեսկզբի մնացորդ	5,560	4,520	-
Համապարփակ ֆինանսական հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում	140	1,040	4,520
	5,700	5,560	4,520

2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2011թ. հունվարի 1	Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված	Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2011թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ	5,560	-	140	5,700
Հատուցումներ աշխատակիցներին				

5,560	-	140	5,700
-------	---	-----	-------

2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2010թ. հունվարի 1	Ուղղակիոր են սե փական կապիտալո ւմ ճանաչված	Համապար- փակ ֆինանսական արդյունքների մասին հաշվե տվությունում ճանաչված	2010թ. դե կտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>				
Հատուցումներ աշխատակիցներին	4,520	-	1,040	5,560
	4,520	-	1,040	5,560

Ներառյալ՝ Փոխհատուցման ենթակա 12 ամսվա ընթացքում	2011թ. 5,700	2010թ. 5,560
---	-----------------	-----------------

### • Պաշարներ

Հազար դրամ	2011թ. դե կտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դե կտեմբերի 31-ի դրությամբ	2009թ. դե կտեմբերի 31-ի դրությամբ
Հումք	238,731	195,594	217,424
Անավարտ արտադրություն	802,092	902,539	808,351
Պատրաստի արտադրանք	30,873	57,466	58,608
Ապրանքներ	34,963	46,572	19,483
	1,106,659	1,202,171	1,103,866

### • Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2011թ. դե կտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դե կտեմբերի 31-ի դրությամբ	2009թ. դե կտեմբերի 31-ի դրությամբ

Առևտրային դեբիտորական պարտքեր	570,255	273,111	495,663
Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստ	(61,888)	(61,888)	-
	<u>508,367</u>	<u>211,223</u>	<u>495,663</u>
Տրված կանխավճարներ	30,802	6,242	2,239
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	22,391	5,740	16,511
Այլ դեբիտորական պարտքեր	1,705	926	225
	<u>563,265</u>	<u>224,131</u>	<u>514,638</u>

Ապրանքների իրացումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 134 օր (2010թ.՝ 68 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Գեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

• **Մնացորդներ դրամարկղում և բանկերում**

Հազար դրամ	2011թ. դե կտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դե կտեմբերի 31-ի դրությամբ	2009թ. դե կտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	1,209	17,607	86,527
Բանկային հաշիվներ	15,786	5,719	14,286
	<u>16,995</u>	<u>23,326</u>	<u>100,813</u>

Համաձայն 06.06.2011թ. «Յունիբանկ» ՓԲԸ և Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ միջև կնքված դրամական միջոցների գրավի և հաշվանցման պայմանագրի՝ Ընկերությունը բանկին գրավ է հանձնում սեփականության իրավունքով իրեն պատկանող և Գ-րավառուի մոտ սպասարկվող իր դրամային, Եվրո, Ռ-Գ ռուբլի և ԱՄՆ դոլարային հաշվի մնացորդները և մուտքերը՝ որպես տվյալ բանկից ստացված վարկի ապահովման միջոց:

• **Սեփական կապիտալ**

**10.1 Կանոնադրական կապիտալ**

Հասարակ անվանական բաժնետոմս 4000դրամ յուրաքանչյուրը	<u>222,18</u>	<u>222,18</u>	<u>222,18</u>
	3	3	3

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

## 1 0.2 Պահուստային կապիտալ

Ընկերությունը կուտակված շահույթի հաշվին ստեղծել է պահուստային կապիտալ, որը կարգավորված է ընկերության կանոնադրությամբ: Պահուստային կապիտալը 2011թ.-ի դե կտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 390,587 հազ.դրամ:

### • Շահաբաժիններ

Ընկերությունը 2011թ.-ին բաժնետերերին շահաբաժին չի վճարել: 2010թ.-ին բաժնետերե րին շահաբաժին է վճարել 18,000 հազ. դրամ:

### • Ակտիվներին վերաբերող շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհների շարժը ներկայացված է ստորև՝

Հազար դրամ	2011թ.	2010թ.
Տարեսկզբի մնացորդ	1,976,310	2,080,326
Ֆինանսական արդյունքների մասին հաշվե տվությունում ճանաչված	(104,017)	(104,016)
Տարեվերջի մնացորդ	1,872,293	1,976,310

Ակտիվներին վերաբերող շնորհները վերաբերում են 2005թ. Հայաստանի Հանրապե տության Հողային օրենսգրքում կատարված փոփոխության արդյունքում Ընկերությանը սե փականության իրավունքով փոխանցված հողամասերի շուկայական և կադաստրային արժեքների տարբերության գումարին:

2012թ. ապրիլին իրականացվել է հողամասերի շուկայական արժեքի գնահատում՝ անկախ գնահատող «ԷՅ ԷՆԴ ԷՄ ՖԱՅՆԵՆՇԼ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՓԲԸ գնահատման գ ործակալության կողմից 2010թ. հունվարի 1-ի դրությամբ: 2012թ. հողամասերը գնահատվել են 2,261,493 հազ.դրամ: Հողամասերի շուկայական (գուտ) արժեքի և կադաստրային արժե քի տարբերության չափով կատարվել է ակտիվներին վերաբերող շնորհի գումարի ճշգ րտում (տես ծանոթագրություն 4):

## 12. Վարկեր և Փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.
Ապահովված բանկային վարկեր	30,000	87,784	201,323	-
Չապահովված փոխառություններ	320,157	226,560	-	-
	<u>350,157</u>	<u>314,344</u>	<u>201,323</u>	

## Վարկեր

06.06.2011թ. «Յունիբանկ» Փակ Բաժնետիրական Ընկերությունից N715-09 չվերականգնվող վարկային գծի պայմանագրով ստացել է վարկային գիծ 200,000 հազ. դրամ, 13% տոկոսադրույքով, 24 ամիս մարման ժամկետով: Ընկերությունը տրամադրված վարկային գծից փաստացի ստացել է 171,323 հազ. դրամի վարկ: Վարկը ապահովված է՝ թիվ 715-09 Գ-Հ պայմանագրի համաձայն 2,579 քառակուսի մետր գրավադրված շենքով և 1.7հա հողամասով, որը գնահատվել է 180,000 հազ. դրամ, թիվ 715-09ՍԳ պայմանագրի համաձայն գրավադրված սարքավորումներով, որը գնահատվել է 135,000 հազ. դրամ, թիվ 715-09/Գ-Գ պայմանագրի համաձայն գրավադրված դրամական միջոցներով և թիվ 541/Գ-Հ պայմանագրի համաձայն 227քմ ընդհանուր մակերեսով թիվ 20 բենգալցակայանի գրավադրմամբ, որը գնահատվել է 140,000 հազ. դրամ:

08.08.2011թ. «Յունիբանկ» Փակ Բաժնետիրական Ընկերությունից N754-09 չվերականգնվող վարկային գծի պայմանագրով ստացել է վարկային գիծ 50,000 հազ. դրամ, 15% տոկոսադրույքով, 5 ամիս մարման ժամկետով: Վարկը մարված է:

02.11.2011թ. «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՍԲԱՆԿ ԽՈՒՄԲ» Փակ Բաժնետիրական Ընկերությունից No V04531 վարկային գիծ տրամադրելու պայմանագրով ստացել է վարկային գիծ 60,000 հազ. դրամ, 12% տոկոսադրույքով, 1064 օր մարման ժամկետով միջև 01.10.2014թ.: Վարկային գիծը ապահովված է «Սարգիս-Կարոլինա» ընկերության երաշխավորությամբ:

## Փոխառություններ

«Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից 2008թ-ին տրամադրվել է 40,000 հազ.դրամի անտոկոս փոխառություն,որից 12,500 հազ. դրամը մարվել է: Մնացած 27,500 հազ.դրամ փոխառությունը ենթակա է մարման 2013թ. հունվարի 10-ին:

«Արմենիա Ինֆերնեյշնլ Էյրվեյս» ՓԲԸ- կողմից 2007թ-ին տրամադրվել է 220,000 հազ.դրամի անտոկոս փոխառություն, որից 58,000 հազ. դրամը մարվել է: Մնացած 162,000 հազ.դրամ փոխառությունը ենթակա է մարման 2012թ. հունվարի 10-ին:

Արմեն Վանեսյանի կողմից տրամադրվել է 20,335 եվրո անտոկոս փոխառություն, որը է

նթակա է մարման 2012թ-ի դեկտեմբերի 31-ին: Փոխատուն գումարը փոխանցել է Jonson Matthey B.V. կազմակերպությանը մատակարարված ներկերի դիմաց՝ փոխառուի փոխարեն:

Արմեն Վանեսյանի կողմից տրամադրվել է 55,000 եվրո անտոկոս փոխառություն, որը ե նթակա է մարման 2012թ-ի դեկտեմբերի 31-ին: Փոխատուն գումարը փոխանցել է REVIMACS R.L. կազմակերպությանը ապակյա շշերի արտադրության սարքավորման ձեռք բերման դիմաց՝ փոխառուի փոխարեն: Փոխառությունը մարված է:

Մամիկոն Գինոսյանի կողմից տրամադրվել է 30,800 եվրո անտոկոս փոխառություն, որը ե նթակա է մարման 2012թ-ի դեկտեմբերի 31-ին: Փոխատուն գումարը փոխանցել է TRUCK TRADING ASSOCIATION B.V. կազմակերպությանը բեռնատար մեքենաների ձեռք բե րման դիմաց՝ փոխառուի փոխարեն: Փոխառությունը մարված է:

Ֆիամետա Հակոբյանի կողմից տրամադրվել է 122,800 հազ.դրամի անտոկոս փոխառություն, որից 56,000 հազ. դրամը ենթակա է մարման 2012թ-ի հունիսի 1-ին, իսկ 66,800 հազ. դրամը ենթակա է մարման 2012թ-ի դեկտեմբերի 31-ին:

Հրայր Հակոբյանի կողմից տրամադրվել է 40,831 հազ. դրամի անտոկոս փոխառություն, որից 34,331 հազ. դրամը մարվել է, իսկ 6,500 ենթակա է մարման 2012թ-ի օգոստոսի 24-ին:

Վերսանդիկ Հակոբյանի կողմից տրամադրվել է 7,030 հազ. դրամի անտոկոս փոխառություն, որը ենթակա է մարման 2012թ-ի դեկտեմբերի 30-ին:

Փոխառությունների իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունն էական չէ:

• Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2011թ. դե կտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դե կտեմբերի 31-ի դրությամբ	2009թ. դե կտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	95,289	71,733	6,767
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	9,053	7,784	6,924
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	82,670	55,931	62,957
Պարտքեր մասնակիցներին	-	17,075	806
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	28,500	27,800	22,600
Այլ կրեդիտորական պարտքեր	140	-	-

215,652

180,323

100,054

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

#### • Հասույթ

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շամպայնի իրացում	844,089	688,164
Օդու իրացում	76,816	124,106
Գինու իրացում	213,671	262,672
Կոնյակի իրացում	415,189	385,494
Քացախի իրացում	52	398
	<u>1,549,817</u>	<u>1,460,834</u>

#### • Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տարա	203,970	189,231
Հումք	624,745	587,354
Աշխատավարձ և սոց վճարներ	218,780	211,543
Մաշվածություն	56,790	34,395
Կոմունալ ծախսեր	65,600	45,123
Այլ	4,670	4,590
	<u>1,174,555</u>	<u>1,072,236</u>

#### • Ֆինանսական ծախսեր, զուտ

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
------------	---	--



Վարկի տոկոս	16,211	18,552
Զուտ ֆինանսական ծախսեր	16,211	18,552

- Այլ ֆինանսական հոդվածներ**

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը Դրամական միջոցներ	(3,806)	(4,602)
Առևտրային դեբիտորական պարտքեր	(10,274)	(9,057)
	(14,080)	(13,659)

- Շահութահարկի գծով ծախս**

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	20,497	20,080
Հետաձգված հարկ (ծանոթ. 6)	(140)	(1,040)
	20,357	19,040

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՍՍ)	131,102		51,118	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով (2010թ.՝ 20%)	26,220	20.00	10,224	20.00
Չնվազեցվող ծախսի ազդեցությունը	5,863	4.47	8,816	17.24
Շահութահարկի գծով ծախս	20,357	15.53	19,040	37.24

- Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ**

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տարվա շահույթ	110,745	32,078
Հասարակ բաժնետոմսերի միջին քանակ	222,183	222,183
Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ դրամներով	498	144

- **Ֆինանսական գործիքներ**

- **Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ**

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության, և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.5-ում:

- **Ֆինանսական գործիքների կատեգորիաները**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

*Ֆինանսական ակտիվներ*

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Դեբիտորական պարտքեր</i>		
Առևտրային դեբիտորական պարտքեր	510,072	212,149
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	50	43,777
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	16,995	23,326
	<u>527,117</u>	<u>279,252</u>

*Ֆինանսական պարտավորություններ*

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկ և փոխառություններ	551,480	314,344
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	132,802	124,392
	<u>684,282</u>	<u>438,736</u>

- **Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ**

Ընկերությունը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժույթային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

- **Ֆինանսական ռիսկի գործոններ**

*ա) Շուկայական ռիսկ*

Ընկերության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժույթային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին (տես՝ բ) ստորև):

*բ) Արտարժույթային ռիսկ*

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթային ռիսկը Ընկերության ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վրա ունի հետևյալ ազդեցությունը՝

Հոդված	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	ԵՎԲ	Ռ-Դ ռուբլի
2011թ.				
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Առևտրային դեբիտորական պարտքեր	198,821	66,657	-	244,594
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	50	-	-	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	1,461	1,158	-	14,376
	<u>200,332</u>	<u>67,815</u>	<u>-</u>	<u>258,970</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Վարկեր և փոխառություններ	541,339	-	10,141	-
Առևտրային և այլ կրե դիտորական պարտքեր	132,802	-	-	-
	<u>674,141</u>	<u>-</u>	<u>10,141</u>	<u>-</u>
Զուտ արդյունք	(473,809)	67,815	(10,141)	258,970

Հողված	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	ԵՎԲ	Ռ-Ռ ռուբլի
2010թ.				
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Առևտրային դեբիտորական պարտքեր	151,443	58,992	-	1,714
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	50	-	-	43,727
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	22,271	43	-	1,012
	<u>173,764</u>	<u>59,035</u>	<u>-</u>	<u>46,453</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Փոխառություններ	314,344	-	-	-
Առևտրային և այլ կրե դիտորական պարտքեր	111,464	12,928	-	-
	<u>425,808</u>	<u>12,928</u>	<u>-</u>	<u>-</u>
Զուտ արդյունք	(252,044)	46,107	-	46,453

Ընկերությունը հիմնականում ենթարկվում է ԱՄՆ դոլարի և Ռ-Ռ ռուբլու փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և Ռ-Ռ ռուբլու նկատմամբ դրամի 10% (2010թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2010թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հողվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2010թ.՝ 10%): Զգայունության վերլուծությունը ներառում է կապակցված և ոչ կապակցված կողմերից փոխառությունները: Դրական ցուցանիշն աճ է վկայում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և սեփական կապիտալում, երբ դրամը արժե վորվում է համապատասխան արժույթի նկատմամբ:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Ռ-Ռ ռուբլու ազդեցություն	
	2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6,782	4,611	25,897	4,645

- 
- 

**գ) Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվե տվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

*դ) Իրացվելիության ռիսկ*

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվե լիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարե լու նպատակով:

- **Կապիտալի ռիսկի կառավարում**

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները՝ բացահայտված ծանոթագրություն 11- ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավե լագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ֆինանսական լծակը (գուտ պարտավորությունը բաժանած ընդհանուր կապիտալի վրա), հետևյալ կերպ.

Հազար դրամ	2011թ. դեկտե մբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտե մբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր փոխառություններ	551,480	314,344
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(16,995)	(23,326)
Չուտ պարտավորություն	534,485	291,018
Ընդհանուր սեփական կապիտալ	1,494,934	1,384,189
Ընդհանուր կապիտալ	2,029,419	1,675,207
Ֆինանսական լծակ	26.34%	17.43%

- **Իրական արժեք**

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

- **Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ**

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի և այլ ցուցանիշների վրա, ներառյալ՝ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

- **Կարևոր հաշվապահական գնահատումներ**

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են և համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

*Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները*

Ընկերության ղեկավարությունը գնահատել է հիմնական միջոցների օգտակարության ժամկետները 20 տարի շենքեր և շինությունների, 5 տարի մեքենաներ, սարքավորումների, տրանսպորտային միջոցների և 1 տարի համակարգչային տեխնիկայի համար: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարության ժամկետները էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն ապա Ընկերության ֆինանսական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

*Հետաձգված հարկի գնահատում*

Ինչես նկարագրված է ծանոթագրություն 6-ում, 2011թ.-ին 5,700 հազ. դրամի (2010թ.՝ 5,560 հազ. դրամ) հետաձգված հարկեր ճանաչվել են: Հետաձգված հարկային ակտիվը ավելանում է աշխատավարձի պահուստներով: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ Ընկերությունը ապագայում կունենա բավարար հարկվող շահույթ, որպեսզի փոխհատուցի հետաձգված հարկային ակտիվները: Եթե Ընկերությունը ապագայում չկարողանա ստանալ հարկվող շահույթ, ապա հետաձգված հարկային ակտիվները չեն փոխհատուցվի:



- **Պայմանականություններ**

- **Գործարար միջավայր**

Հայաստանում շարունակվում են քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես ս զարգացող երկիր Հայաստանը չունի այնպիսի օրենսդրական ենթակառուցվածք, որն առկա է ավելի զարգացած ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Հետևաբար, Հայաստանում իրականացվող գործառնությունները կրում են որոշակի ռիսկեր, որոնք բնորոշ չեն զարգացած երկրներում իրականացված գործառնություններին: Ընկերությունը տեսանելի ապագայում կարող է ենթարկվել նմանատիպ ռիսկերի և դրանց հետևանքների ազդեցությանը: Այս ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում այն

ճշգրտումները, որոնք կարող էին առաջանալ ապագա անորոշությունների պարզաբանումից: Այս ճշգրտումները, առկայության դեպքում, կբացահայտվեն Ընկերության ֆինանսական հաշվետվություններում այն ժամանակաշրջանում, երբ դրանք կդառնան հայտնի կամ գնահատելի:

• **Ապահովագրություն**

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը՝ իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Ընկերության գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական դրության վրա:

• **Հարկեր**

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Դեկլարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

**Գործարքներ կապակցված կողմերի միջև**

• **Գործարքներ ղեկավարության հետ**

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը,

Հազար դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ՝ ներառյալ սոցիալական ապահովագրության վճարներ	37,621	41,456
	37,621	41,456

• **Նախորդ տարիների էական սխալների ուղղում**

Ինչպես ներկայացված է 2.6 ծանոթագրությունում, Ընկերության քաղաքականությունն է հետընթաց ճշգրտել ընթացիկ տարում հայտնաբերված էական սխալները: Արդյունքում 2010թ. հունվարի 1-ի դրությամբ կուտակված շահույթի մնացորդը ենթարկվել է ստորև ներկայացված փոփոխությունների:

Հազար դրամ

	2009թ.	2010թ..
Կուտակված շահույթի սկզբնական մնացորդը մինչև վերաներկայացումը	108,872	92,528
2009թ. ճշտում	-	(18,080)
Ներդրման արժեզրկում Եկամուտ՝ որպես պետական շնորհ ստացված հողամասից	-	(7,546)
	-	104,016
Անհուսալի դեբիտորական պարտքերի պահուստի ծախսեր	-	(61,888)
Հերաձգված հարկային ակտիվների ճշգրտումից ե կամուտ	4,520	1,040
Զօգտագործված արձակուրդի պահուստի ծախս	(22,600)	(5,200)
Կուտակված շահույթի սկզբնական մնացորդը վե րաներկայացումից հետո	90,792	104,870





[www.fintechaudit.am](http://www.fintechaudit.am)

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի Գործադիր տնօրեն՝ Ֆիամետա Հակոբյանը, Գլխավոր հաշվապահ՝ Հովհաննես Իսկաջյանը, Տնտեսագետ՝ Գագիկ Մինասյանը, Իրավախորհրդատու՝ Սերգեյ Հակոբյանը սույնով հայտարարում ենք այն մասին, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել է կամ առնչվում է ընկերությունը:

Գործադիր տնօրեն

Ֆիամետա Հակոբյան

Գլխավոր հաշվապահ

Հովհաննես Իսկաջյան

Տնտեսագետ

Գագիկ Մինասյան

Իրավախորհրդատու

Սերգեյ Հակոբյան

## Տարեկան զեկույց

### 2011թ. ընթացքում Ընկերության կողմից իրականացված գործունեության վերաբերյալ

#### Զեկույցող Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի Գործադիր տնօրեն Ֆիամետա Ֆրանսիկի Հակոբյան

Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի բաժնետոմսերը դասվում են որպես հասարակ, անվանական բաժնետոմսեր, ներկայումս դրանք ոչ փաստաթղթային ձևի են: Քանակը կազմում է 222183 հատ: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 4000 հայկական դրամ: Բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները և պարտականությունները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ և «Բաժնետիրական Ընկերությունների մասին» ՀՀ օրենքով: Բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների և պարտականությունների գրանցումը կատարում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ – ն:

Կանոնադրական կապիտալի չափը կազմում է 888732000 դրամ: Կանոնադրական կապիտալը 100 տոկոսով ձևավորված է սովորական բաժնետոմսերից, որոնց քանակը կազմում է 222183 հատ: Մասնակիցների կողմից իրենց պատկանող արժեթղթերի դիմաց վճարման պարտավորությունը 100 տոկոսով կատարված է:

Ընկերությունը հիմնականում զբաղվում է ալկոհոլային խմիչքների արտադրությամբ և վաճառքով: Առավել կարևորվում են շամպայն գինիների, օղու և կոնյակների արտադրության ոլորտները, որոնց զարգացման հիմնական ուղղությունները կայանում են նոր տեխնոլոգիաների կիրառման, արդի սարքավորումների ձեռք բերման և օգտագործման մեջ:

Արտադրանքը սպառվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում: Ընկերությունը իր արտադրատեսակներով ներքին շուկայում զբաղեցնում է կայուն դիրք: Իրացումը հիմնականում իրականացվում է Ընկերության ֆիրմային խանութների միջոցով: Արտադրանքի վաճառքը իրականացվում է նաև տարբեր առևտրային կետերին մատակարարելու միջոցով, սակայն դրանցից ոչ մեկը որպես խոշոր սպառող չի դիտվում: Արտաքին շուկայում Ընկերության արտադրանքը հիմնականում սպառվում է Ռուսաստանի Դաշնությունում:

Հիմնական մրցակիցներ են համարվում օղի, գինի, կոնյակ արտադրող ընկերությունները:

Ընկերությունը չունի այնպիսի մատակարարներ, որոնց բաժին է ընկնում ապրանքանյութական արժեքների ընդհանուր մատակարարման 10 տոկոսից ավելին:

Ընկերությունը օժանդակ նյութերի, շրջանառու միջոցների ձեռք բերման համար մշտապես ունի ֆինանսական ներքուքերի կարիք, ուստի այդ պատճառով հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը դիմում – հայտ է ներկայացրել «Յունիբանկ» ՓԲԸ – ին վարկ ստանալու խնդրանքով:

2011թ. հունիսին Ընկերությունը «Յունիբանկ» ՓԲԸ – ի հետ կնքել է անշարժ գույքի հաջորդող գլխավոր հիփոթեքի պայմանագիր և ըստ դրա չվերականգնվող վարկային գծի պայմանագիր, գրավադրելով Ընկերության սեփականությունը հանդիսացող, Կոտայքի մարզ, գ. Քանաքեռավան հասցեում գտնվող գինու կետը իր շենք-շինություններով և հիմնական միջոցներով: Ըստ վերը նշված պայմանագրի Ընկերությունը 24 ամիս ժամկետով, տարեկան 13 (տասներեք) տոկոս տոկոսադրույքով ստացել է 200.000.000 / երկու հարյուր միլիոն/ ՀՀ դրամ վարկ:

2011թ. օգոստոսին Ընկերությունը «Յունիբանկ» ՓԲԸ – ի հետ կնքել է չվերականգնվող վարկային գծի պայմանագիր, հաջորդող գլխավոր հիփոթեքի պայմանագրի հիման վրա գրավադրելով Ընկերության սեփականությունը հանդիսացող ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 20 հասցեում գտնվող բենզալցակայանը իր հողատարածքով և Կոտայքի մարզ, գ. Քանաքեռավան հասցեում գտնվող գինու կետը իր շենք-շինություններով և հիմնական միջոցներով: Ըստ վերը նշված պայմանագրի Ընկերությունը 5 ամիս ժամկետով, տարեկան 15 (տասնհինգ) տոկոս տոկոսադրույքով ստացել է 50.000.000 / հիսուն միլիոն/ ՀՀ դրամ վարկ:

2011թ. նոյեմբեր ամսին Ընկերությունը «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի հետ կնքել է տարեկան 12 (տասներկու) տոկոս տոկոսադրույքով մինչև 01 հոկտոմբեր 2014թ. մարման պայմանով, մինչև 60.000.000 (վաթսուն միլիոն) դրամ գումարի չափով վարկային գիծ տրամադրելու պայմանագիր: Ընդ որում վարկային գծի սահմանաչափը յուրաքանչյուր ընթացիկ տարվա հունվարի 15 – ից մինչև նոյեմբերի 15 – ը սահմանվել է 30.000.000 (երեսուն միլիոն) դրամի չափով: Բանկի առջև Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունները կատարումն ապահովելու նպատակով որպես Երաշխավոր հանդես է եկել «Սարգիս –Կարոլինա» ՍՊԸ-ն, քանի որ վերջինիս հետ Ընկերությունը կնքել է ապրանքների մատակարարման պայմանագիր, ըստ որի Ընկերությունը հանդես է գալիս որպես մատակարար, իսկ «Սարգիս-Կարոլինա» ՍՊԸ-ն որպես գնորդ, և երկու ընկերությունների մեջ հաստատված են կայուն տնտեսական հարաբերություններ:

Ընկերությունն ունի գործունեության իրականացման համար հատուկ լիցենզիաներ, որոնք տրված են անժամկետ:

Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանում է Կոտայքի մարզ, գյուղ Քանաքեռավանում գտնվող գինու կետը իր շենք - շինություններով և սարքավորումներով:

Թբիլիսյան խճուղի 20 հասցեում գտնվող Ընկերության գործարանի տարածքից որոշակի հատված հինգ տարի ժամկետով ամսական 360000 /երեք հարյուր վաթսուն հազար/ դրամ արժեքով վարձակալության է հանձնված «Գարանտ սերվիս» ՍՊԸ - ին:

Թբիլիսյան խճուղի 20 հասցեում գտնվող Ընկերության գործարանի տարածքից որոշակի հատված՝ 200 քմ մակերեսով հողատարածք վարձակալությամբ է

տրված «Ֆրանսպարկ» ՓԲԸ – ին, ամսական 142000 դրամ վարձավճարով, հինգ տարի ժամկետով:

Թբիլիսյան խճուղի 20 հասցեում գտնվող, Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող վառելիքի լիցքավորման կայանը հինգ տարի ժամկետով, ամսական 162960 /մեկ հարյուր վաթսուներկու հազար ինը հարյուր վաթսու/ դրամ արժեքով վարձակալության է հանձնված «Ֆլեշ» ՍՊԸ - ին:

Ընկերությունը վարձակալական հիմունքներով օգտագործում է Ագաթանգեղոսի 7 հասցեում գտնվող տարածքը, որը գործում է որպես ֆիրմային խանութ: Վարձակալության պայմանագիրը կնքված է անորոշ ժամկետով, ամսական 60000 /վաթսու հազար/ դրամ վարձավճարով:

Ընկերությունը անորոշ ժամկետով կնքված անհատույց օգտագործման պայմանագրի շրջանակներում, որպես ֆիրմային խանութ է օգտագործում Մաշտոցի պողոտա 27 հասցեում գտնվող տարածքը:

Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանում են ք. Էջմիածին, Մաշտոցի փողոց թիվ 28 հասցեում գտնվող խանութի տարածքը:

Խաղողի մթերման սեզոնային աշխատանքները կազմակերպելու նպատակով Ընկերությունը վարձակալում է Տավուշի մարզ գյուղ Դեբեդավան հասցեում գտնվող «Նոյեմբերյանի գինու գործարան» ՓԲԸ – ին պատկանող գինու կետը տարեկան 5760000 /հինգ միլիոն յոթ հարյուր վաթսու հազար/ դրամ վարձավճարով: Վարձակալության պայմանագիրը կնքված է անորոշ ժամկետով:

Ընկերությունն իր գործունեության մեջ ունի ներգրավված հողատարածքներ, շենքեր, շինություններ, որոնք մեծամասնությամբ կենտրոնացված են ք. Երևան Թբիլիսյան խճուղի 20 հասցեում:

Աշխատողների միջին թվաքանակը 2011թ. ընթացքում կազմել է 250 մարդ:

Ընկերության հասարակ անվանական բաժնետոմսերի մոտավորապես երկու ամբողջ չորս տասնորդական տոկոսը պատկանում է Ընկերության աշխատակիցներին:

Ընկերությունը չունի այնպիսի աշխատակիցներ, որոնց տարեկան վարձատրությունը գերազանցում է նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկը:

Ընկերությանը հարկային արտոնություններ տրված չեն:

Ընկերության նկատմամբ հաշվետու տարվա ընթացքում դատարանի կողմից պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի 07.07.11թ. թիվ 1000646 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում ստուգում է իրականացվել բյուջեյի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերաբերյալ: Արդյունքում կազմվել է համապատասխան ակտ, ըստ որի Ընկերությանը ներկայացվել է շահութահարկի գծով լրացուցիչ 1506100 (մեկ միլիոն հինգ հարյուր վեց հազար մեկ հարյուր) դրամի չափով

պետ. բյուջե վճարման պարտավորություն: Գումարը վճարվել է պետ. բյուջե սահմանված ժամկետում:

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ պետական այլ իրավասու մարմինների կողմից ստուգումներ չեն իրականացվել: Բոլոր տեսակի հաշվետվությունները Ընկերության կողմից ներկայացվել են գործող օրենսդրությանը համապատասխան և առանց ժամկետների խախտման: Ընկերության հաշվապահական հաշվեկշռում արտացոլված մյուս տույժ-տուգանքների գումարները գոյացել են վճարումների մասնակի ուշացումների հետևանքով:

Ընկերությունը 2011թ. ընթացքում ֆինանսական միջոցներ ներգրավելու նպատակով փոխկապակցված անձանց հետ կատարել է ներքոհիշյալ գործարքները.

31.01.11թ. Ընկերության Դիտորդ խորհրդի նախագահ Հրայր Հակոբյանը անտոկոս փոխառության պայմանագրի հիման վրա Ընկերությանը տրամադրել է 33.331.000 դրամ գումար օժանդակ նյութերի ձեռք բերման համար:

25.04.11թ. Ընկերության տնօրեն Ֆիամետա Հակոբյանը անտոկոս փոխառության պայմանագրի հիման վրա պարտավորվել է անհրաժեշտության դեպքում Ընկերությանը տրամադրել մինչև 56.000.000դրամ գումար, Ընկերության տնտեսական գործունեությանը օժանդակելու նպատակով՝ օժանդակ նյութերի՝ խցանների, ջերմածածկոցիկների ձեռք բերման համար:

27.04.11թ. Ընկերության Դիտորդ խորհրդի նախագահ Հրայր Հակոբյանը անտոկոս փոխառության պայմանագրի հիման վրա Ընկերությանը տրամադրել է 1.000.000դրամ գումար, շրջանառու միջոցների համալրման նպատակով:

12.05.11թ. Ընկերության տնօրեն Ֆիամետա Հակոբյանը անտոկոս փոխառության պայմանագրի հիման վրա պարտավորվել է անհրաժեշտության դեպքում Ընկերությանը տրամադրել մինչև 55.500.000դրամ գումար, Ընկերության տնտեսական գործունեությանը օժանդակելու նպատակով՝ շրջանառու միջոցների ձեռք բերման համար:

10.06.11թ. Ընկերության տնօրեն Ֆիամետա Հակոբյանը անտոկոս փոխառության պայմանագրի հիման վրա պարտավորվել է անհրաժեշտության դեպքում Ընկերությանը տրամադրել մինչև 11.300.000դրամ գումար, Ընկերության տնտեսական գործունեությանը օժանդակելու նպատակով՝ շրջանառու միջոցների ձեռք բերման համար:

24.08.11թ. Ընկերության Դիտորդ խորհրդի նախագահ Հրայր Հակոբյանը անտոկոս փոխառության պայմանագրի հիման վրա պարտավորվել է անհրաժեշտության դեպքում Ընկերությանը տրամադրել 6.500.000դրամ գումար, շրջանառու միջոցների համալրման նպատակով:

27.12.11թ. Ընկերության խոշոր բաժնետեր և փոխկապակցված անձ Վերսանդիկ Հակոբյանը անտոկոս փոխառության պայմանագրի հիման վրա պարտավորվել է

Ընկերությանը տրամադրել մինչև 7.030.000 դրամ գումար, շրջանառու միջոցների համալրման նպատակով:

Նշված փոխառություններից մի մասը հետ է վերադարձվել Փոխատուներին:

Հաշվեկշռում առկա այլ փոխառության գծով պարտքերը գոյանում են նախկինում կնքված փոխառության գործող պայմանագրերից:

Ընկերության 2011թ. աուդիտն իրականացրել է «ՖԻՆՏԵԽ ԱՌԻԴԻՏ» ՓԲԸ – ն, որը գտնվում է ք. Երևան, Պոռոչյան2/1 հասցեում, Լիցենզիա N ԱԾ/ATS 072: Աուդիտն իրականացնող անձն եկել է այն եզրահանգման, որ ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների: (Աուդիտորական եզրակացության պատճենը կցվում է):

**Ստորև ներկայացվում է Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի կողմից 2011թ. ընթացքում հաշվարկված և պետ. բյուջե վճարված գումարները ըստ հարկատեսակների հազ. դրամ**

h/h	Հարկատեսակ	Հաշվարկվել է	Վճարվել է
1	ԱԱՀ	70300.0	51300.0
2	Ակցիզային հարկ	90600.0	82900.0
3	Եկամտահարկ	28930.0	25700.0
4	Շահութահարկ	20497.0	18556.0
5	Գույքահարկ	1583.0	1587.0
6	Հողի հարկ	1853.0	1853.0
7	Բնապահպանական վճար	319.0	302.0
	<b>Ընդամենը</b>	<b>214072.0</b>	<b>182198.0</b>

Ընկերության ապագա գործունեության հիմնական սկզբունքները կայանում են նոր արտադրատեսակների, տեխնոլոգիաների ներդրման, հիմնական միջոցների՝ սարքավորումների արդիականացման, վերազինման, արտադրության ժամանակակից սկզբունքների մշակման, հունքի (խաղողի, գինեմյութի ) սեփական բազայի ստեղծման մեջ: Հունքի սեփական բազայի ստեղծումը ենթադրում է հողատարածքների ձեռք բերում, կան վարձակալություն, մշակում՝ հետագա բերք ստանալու պայմանով, որը կհանդիսանա որպես հունք: Այս սկզբունքների կիրառումը կխթանի Ընկերության արտադրատեսակների միջազգային շուկա ընդլայնված ձևով մուտք գործելու գործնթացը, ինչպես նաև արտադրության անխափանությանը և անկախացմանը արտաքին գործոններից: Նշված գործունեության իրականացման համար մոտավորապես անհրաժեշտ է 2 – ից – 2.5 միլիոն եվրո: Արտադրության կարևոր նախապայմաններից մեկն է էժան, սակայն որոկյալ հունքի և օժանդակ նյութերի ձեռքբերումը, որը թույլ կտա ձևավորել ճկուն գնային քաղաքականություն, մրցակցային դաշտում ապահովել կայուն դիրք, սպառողին (ինչպես բիզնես այնպես էլ վերջնական) ներկայացնել որակյալ և մատչելի արտադրանք: Քանի

որ ակտիվորեն արտադրության բնագավառում ընկերությունը բազմապրոֆիլ է, ուստի գտնվում է մշտական մրցակցության մեջ թե տեղական արտադրողների հետ, թե ներմուծող կազմակերպությունների հետ: Մրցակցային դաշտում ընկերությունն իրականացնում է բարեխիղճ և ողջամիտ քաղաքականություն և չի չարաշահում իր դիրքերը: Բիզնեսի զարգացման վրա էական ազդեցություն են ունենում ինչպես ներքին այնպես էլ արտաքին գործոնները: Ներքին գործոնների շարքին են դասվում պետության տնտեսական իրավիճակը, այն է դրամի արժեվորումը կամ արժեզրկումը, ներքին ապրանքաշրջանառությունը, սպառողի գնողունակությունը, տնտեսական զարգացման ընդհանուր մակարդակը, հարկային և մաքսային օրենսդրությունը, վարչարարությունը, մրցակցության հավասար պայմանների ապահովումը: Էական ազդեցություն ունեն նաև արտաքին գործոնները՝ այն է միջազգային տնտեսական իրավիճակը, արտաժույթների գնային տատանումները, առաքված արտադրանքի դիմաց գումարների ստացումը, որը անմիջական ազդեցություն է ունենում վերարտադրության կազմակերպման համար: Վերջինս ներկայումս բավականին ռիսկային է, քանի որ այն երկրները, որտեղ որ ընկերությունը ապրանքներ է առաքում ևս գտնվում են անկայուն տնտեսական վիճակում, ուստի դժվարին խնդիր է դարձել վստահելի և վճարունակ գործընկեր գտնելը:

Վերջին տարիներին իրացման ծավալների անկում է նկատվում, ուստի ընկերությունը, չնայած ռիսկայնությանը, չի սահմանափակվում իր արտադրանքը միայն հայկական շուկայում իրացնելով: Մշտապես ուսումնասիրվում են նոր շուկաներ մուտք գործելու հնարավորությունները, մասնավորապես ԱՊՀ և եվրոպական երկրներ, այդ երկրների սպառողներին ընկերության արտադրանքը ներկայացնելու հիմնահարցերը:

2011թ. ընթացքում ընկերությունը կնքված պայմանագրի շրջանակներում Բելառուսի Հանրապետություն սեփական արտադրության կոնյակ է արտահանել, այնպես էլ այդ երկրի ձեռնարկություններից ներմուծել է որոշակի քանակությամբ ակտիվային խմիչքներ, մասնավորապես օղիներ: Ներկայումս համագործակցությունը բելոռուսական այդ ընկերությունների հետ ակտիվորեն շարունակվում է, մասնավորապես ընկերությունը ձգտում է մեծացնել իր արտադրանքի արտահանման ծավալները Բելոռուսի Հանրապետություն:

Բացի դրանից արտահանումներ են եղել Վրաստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, աֆրիկյան մայրցամաք:

Սակայն, Աֆրիկա, մասնավորապես Կամերունի Հանրապետություն արտահանելու հետ կապված ընկերությունը որոշակի խնդիրներ է ունեցել, քանի որ աֆրիկյան գործընկերը թերի է կատարել իր պայմանագրային պարտավորությունները, և ընկերությունը ստիպված է եղել 2012թ. դիմել դատարան մատակարարված ապրանքի գումարը դատական կարգով Գնորդ կազմակերպությունից ինչպես նաև գործարքի երաշխավոր հանդես հանդես եկող երորդ անձից բռնագանձելու վերաբերյալ: Ներկայումս գործը դատաքննության փուլում է, սակայն պատասխանող կողմը հանձն է առել գործարքի ամբողջ գումարը վճարի երկու ամսվա ընթացքում: Մշտապես պլանավորվում են զարգացման հեռանկարները, քանի որ ներկա պահին ընկերությունը աշխատում է իր հզորության մոտ 30 տոկոսի չափով: Մշակվում են արտադրության և սպառման օպտիմալ, ճկուն տարբերակներ, որոնք կկարողանան ապահովել



բիզնեսի հնարավորինս կայուն զարգացում: Սպառման ծավալների ընդլայնման նպատակով Ընկերությունը ճկուն գնային քաղաքականություն է վարում իր արտադրանքն առաջարկելով ինչպես խոշոր իրացում ապահովող ցանցերին, այնպես էլ մանրածախ վաճառակետերին, միաժամանակ ապահովելով նրանց մեջ առողջ մրցակցություն: Ընկերությունը սկզբունքային է համարում իր արտադրության մեջ հիմնականում տեղական հումքի օգտագործումը: Մասնավորապես հիմնական հումք հանդիսացող խաղողը ձեռք է բերվում հայաստանյան խաղողագործական շրջաններից՝ այն է Տավուշի, Արմավիրի, Կոտայքի մարզերից, որտեղից և ստացվում է գինեմշուկը: Տարաները՝ շշերն ու արկղերը, ինչպես նաև պիտակները նույնպես ձեռք են բերվում հիմնականում տեղական արտադրողներից: Մնացած այլ օժանդակ նյութերը, որքանով որ այն հնարավոր է թե տնտեսական, թե որակական և այլ առումներով նույնպես ձեռք են բերվում տեղական արտադրողներից:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է Բաժնետերերի ընդհանուր ժողովը: Ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում բոլոր այն հարցերը, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն վերապահված են միայն ժողովին:

Ընկերության դիտորդ խորհուրդը իրականացնում է ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք հանդիսանում են ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:

Ընկերության դիտորդ խորհրդի անդամներն են.

	Բաժնետոմսերի քանակը %
1. Վերսանդիկ Հակոբյանը	39.0326%
2. Հրայր Հակոբյանը	38.9327 %
3. Բախչազյուլ Սկրտչյանը	-
4. Տիգրան Բեգոյանը	0.2137 %
5. Լենա Սիմոնյանը	-
6. Մարտին Այվազյանը	0.1566 %
7. Անահիտ Բակունցը	0.3227%
8. Մանուկ Դուրուկչյանը	0.3875%
9. Հրանտ Թումադայանը	0.1755%
10. Տիգրան Ռշտունին	0.0108%

Ընկերության գործադիր տնօրենն է Ֆիամետա Հակոբյանը, որը իրականացնում է Ընկերության ընթացիկ կառավարումը: Նրա իրավունքները և պարտականությունները սահմանվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և Ընկերության կանոնադրությամբ:

Կառավարմանը մասնակցող անձանցից ազգակցական կապի մեջ են Վերսանդիկ Հակոբյանը, Հրայր Հակոբյանը, Ֆիամետա Հակոբյանը (քույր և եղբայրներ են) և Բախչազյուլ Սկրտչյանը, որը հանդիսանում է Վերսանդ, Հրայր և Ֆիամետա Հակոբյանների մայրը:

Կառավարմանը մասնակցող անձանց և Ընկերության միջև շահերի բախման դեպք տեղի չի ունեցել:

Ընկերության բաժնետերերի 2010թ տարեկան. ընդհանուր ժողովը տեղի է ունեցել 2011թ. հունիս ամսվա վերջին շաբաթ օրը(ըստ Ընկերության կանոնադրության), 2011թ. համար դեռևս տարեկան ժողով չի հրավիրվել:

**Ընկերության հետ փոխկապակցված անձիք, Ընկերության սեփականատերերը:**

Հրայր Ֆրանսիկի Հակոբյանը՝ խոշոր բաժնետեր և միաժամանակ հանդիսանում է Ընկերության Դիտորդ Խորհրդի նախագահ

2.Վերսանդիկ Ֆրանսիկի Հակոբյանը՝ խոշոր բաժնետեր և միաժամանակ հանդիսանում է Ընկերության Դիտորդ Խորհրդի անդամ

3. Ֆիամետա Ֆրանսիկի Հակոբյանը՝ Ընկերության բաժնետեր է և միաժամանակ հանդիսանում է Ընկերության Գործադիր տնօրեն:

Զեկույցը հրապարակեց

Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի

Գործադիր տնօրեն

Ֆիամետա Ֆրանսիկի Հակոբյան